



ԱՐՄԱԿԱԿԱՆ ԿԱՅՏ


ԳՈԽԱԴՐՈՒՅՑՈՒ

ԿԱՐԵՆ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻ

Մ Ա Կ Ա

1924

ՊԵՏՏՐՈՒ



№

ԴՐԱՅՎԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

2



ԱՆՄԱԴԱԿԱՆ ԿԱՅԵՐ

A III
3209

ԿԱՐԵՆ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

(ՓՈԽԱԴՐՈՒԹՅՈՒՆ)




№ 136

Հ. Ս. Խ. Հ. ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

№ 136

ԲՈՒԺԱ

1924



Շապիկի յեզ 21 յերեսի նկարները՝ Հ. ՄԻՀԱՆԱԶՅԱՆԻ
Մնացած կլիշեները տրամադրել ե Գ. ՄԻՐԻՄԱՆՅԱՆԻ
Հրատարակությունը



Главлит № 26177

Тираж 3000

Типография Госиздата Армении.

Москва, Армянский пер. д. 2.



ԱՆՄԱՐԱԿԱՆ ԿԱՅԺ

1.

Աշոտն ուսումնարանից վազե-վազ գնաց տուն, պայուսակը նետեց թաղթի վրա ու նստեց պատուհանի առաջ։
Դա նրա արհեստանոցն եր։

Ինչե՞ր ասես՝ չկար այդտեղ։ Փայտի ու տախտակի կտորներ,
կոնսերվի դատարկ ամաններ, յերկաթե ողակներ, մեխ, չանգալ,
մաֆթուլ, սոսինձ, կոտրած ապակի...»

Նա մտքում դրել եր այդ որն անպայման վերջացնել։
Ու խորասուզվեց աշխատանքի մեջ։
Նրա հայրը ծառայում եր «Հայկոպի» խանութներից մեկում։
Յերեկոյան դեմ, յերբ տուն յեկավ, տեսավ Աշոտին պատու-
հանի առաջ ու, բարկացած, ասաց։

— Այ տղա, ելի քո ե՞շն ես քշում։ Աստվածվկա, դիվ կտա-
նեմ ու զիբիլի արկղը կածեմ։ Դասերդ սերտել ես։

Աշոտն առանց գլուխը բարձրացնելու մեքենայաբար ասաց։

— Հայրիկ, դասերս լավ գիտեմ։

— Ել եղ ի՞նչ ես գլխիդ զոռ տալիս, ասաց հայրը մոտենալով
նրան։

— Մեյմուն եմ շինում։

— Ի՞նչ։

— Մեյմո՞ւն, պատասխանեց Աշոտը վոտքի կանգնելով։ — Այ,
տե՛ս, եսպես հուփ ես տալիս ես սանդուխքի ծայրերն ու մեյմու-
նը վերեվ, քանդրբազի պես, պար-պար ե անում։ Խաղալիքների
խանութում տեսա, ասի, գնամ ու շինեմ։ Լավ ե, չե։

Հայրն առավ ձեռը, մի-յերկու անգամ փորձեց ու դեն ձգելով
ասաց։

— Դատարկ բան ե, վե՛ր, վեր կաց հացը քցի:

Աշոտը մի քիչ կոտրված հոր բացասական վերաբերմունքից, վեր կացավ, փռեց սեղանը, դրեց հաց, պանիր, կանաչի և վազելով խոհանոց՝ բերավ մի կաթսա՝ յերեկվանից մնացած բրնձե ճաշշով լի:

Ճաշին հայրը սկսեց իր քարոզները.

— Զե՛, վախենում եմ դու մարդ չդառնաս: Գիրք, գրագրություն քիչ ես սիրում: Փոխանակ վոր խելքդ քոր գա ու մի բան սովորես, ձեռքդ ե քոր գալիս: Այ, մեր Հայկոպում, տե՛ս, ի՞նչ գիտնական, ուսումնական տղաներ կան: Դու յել պիտի սովորես, վոր նրանց նման հաշվապահ, գրագիր, կամ թե չեքարտուղար դառնաս:

Վերջացնելով ճաշն ու քարոզները հայրը վեր կացավ տեղից, ու մոտենալով ելեքտրական լամպին՝ հարցրեց.

— Շինե՞ց:

— Այո՛, հայրիկ, պատասխանեց Աշոտը. — Նոր մեզ մոտ եր մանտյար Նիկոլը, տես ի՞նչ լավ ե վառվում, ասաց Աշոտը կենդանացած ու փորձեց լույսը:

Ու մի փոքր լուսթյունից հետո՝ ավելացրեց:

— Զարմանք բան ե: Վո՞չ կերոսին ունի, վո՞չ յուղ, վո՞չ ել պատրույք ու եսպես լավ լույս ե տալիս: Տեսնես ես վոնց ե ինքն իրեն՝ առանց լուցկու, վառվում:

— Ի՞նչ իմանամ, մեր գյուղի տիրացուն շատ բան եր տեսել, վոր ինձ սովորցներ, պատասխանեց հայրը հեգնանքով:

Ու մի փոքր հետո վեր կացավ, մի քանի անգամ հորանջեց, ու պառկեց քնելու:

Աշոտը հավաքեց սեղանը, ամանները տարավ խոհանոց, լվաց, ու ամեն ինչ իր տեղը դնելուց հետո, առավ ուսումնարանից բերած մի գիրք ու խորասուղվեց ընթերցանության մեջ:

Աշոտը 14 տարին լրացած մի պատանի յեր:

Յերկու տարի առաջ նա ավարտեց իրենց գյուղի առաջին աստիճանի դպրոցը:

Ամառը, յերբ նրա հայրը Յերեվանից գնացել եր գյուղ, դպրոցի ուսուցիչը խորհուրդ տվեց, վոր Աշոտին հետը տանի քաղաք և ուսումը շարունակել տա:

— Բնդունակ տղա յե, նեղությունդ իզուր չի կորչի:

Հայրը լսեց նրան և ամառվա վերջին հետը բերավ Յերեվան:

Աշոտն ապրում եր Կոնտում, ուր նրա հայրը ուներ մի կոկլիկ սենյակ:

Առավոտները գնում եր դպրոց: Կես որից հետո վառում եր

ոջախը, կաթսան դնում վրան ու ճաշ պատրաստում։

Յերբ կերակուրը պատրաստ եր լինում, մինչեվ հոր գալը, նըստում եր իր արհեստանոց-պատուհանի առաջ։ հազար ու մի փորձեր անում, իսկ հոր գալուց հետո դասերն եր սերտում, ընթերցանությամբ պարապում։



Աշոտը փորձեր եր անում

Մի ժամանակ նրան իր արհեստանոցն ել ձանձրացրեց։ Գործիքներ չուներ։ Շատ բան ուզում եր շինել, բայց չեր հաջողվում։ Ու նա դռւրս եր գալիս Աբովյան փողոցն ու ժամերով կանգնում

Ժամագործ Թեվոսի պատուհանի առաջ ու դիտում նրա աշխատանքը:

Սակայն որը մթնում եր,

Աշոտը ձգեց գիրքն ու շտեպսելը դրեց իր բունը,

Ելեքտրական լամպը վառվեց:

Աշոտը հանեց շտեպսելը—լամպը հանդավ: Դրեց՝ նորից վառվեց: Ու այդ ամենը մի ակնթարթում:


— Ուղղակի հրաշք բան եւ Բա յես չիմանա՞մ, թե առանց կրակ ու առանց լուցկի վո՞նց ե վառվում:

Ու մտահոգության մեջ ընկավ:

Բնականից նա շատ հարցասեր ու հետաքրքրվող տղա յեր: Նա ուզում եր անպատճառ իմանալ այդ յերեվույթի պատճառը:

— Ի՞նչ անեմ վոր իմանամ, մտածում եր նա: Տեսնես ի՞նչ կա ես յերկու ծակի մեջ, վոր հենց վոր շտեպսելը մտցնում իս՝ լույս ե տալիս:

Աշոտն իր արհեստանոցից մի մեխ վերցրեց ու դրեց ծակերից



Աշոտը մտցնում ե յերկու մեխը

մեկի մեջ։ Վո՞չ մի հետեվանք։ Մի մեխ ել վերցրեց ու դրեց մյուս ծակի մեջ։ Կրկին վո՞չ մի հետեվանք։ Վերցրեց քալֆաթինը, այդ յերկու մեխի գլուխները միացրեց միմիանց ու յերկու մատի պես մտցրեց ծակերը։

Այդ ըովեյին մի ինչ վոր բան պոռթկաց, միջանցքում լույսը հանգավ ու Աշոտը, ոձից խայթվածի պես, վեր թռավ՝ կարծես թե ինչ վոր ասեղներ մատների միջով նրա մարմինը թափվեցին։

Հարեվանները դուրս յեկան սենյակներից զարմանք հայտնելով, թե ինչո՞ւ հանգավ լույսը։ Աշոտը զգաց վոր ինքն ե դրա պատճառը, սակայն ձայն չհանեց։

Շրջապատի աղմուկից զարթնեց հայրը։

— Ես ի՞նչ զարմաղալ ե. Աշոտ, լամպը վառի՛ր։

Աշոտը շտեպսելը դըեց իր քունը, սակայն լամպը չվառվեց։

— Ես ի՞նչի՞ չի վառվում։

— Յե՞ս... ամեն տեղ հանգավ... շտեպսելը... չգիտեմ... պատասխանեց Աշոտը շփոթված։

— Ելի մի ոյին ես սարքել, ասաց հայրը գլխի ընկնելով։

Աշոտը, վոր չեր սիրում ստել, պատասխանեց։

— Զե՛, հայրիկ։ Յես ել չիմացա, թե ի՞նչպես յեղավ։ Ա՛յ, ես մեխերը մտցրի ծակերի մեջ ու մեկ ել տեսնեմ, ֆը՛ռթ, հանգավ ու ձեռիս ենպե՞ս խփեց, վոր ոխտը արշին ինձ դեն քցեց։

— Աչքդ ել հանեց, հիմար գլուխ։ Հիմի մենք ի՞նչ պիտի անենք։ Կողքի հարեվանը գնաց մանտյոր Նիկոլի յետեվից։

Նա յեկավ, նայեց՝ ինչպես քժիշկը հիվանդին ու տվեց իր վորոշումը։

— Այրվել են խցանները։ Կարճարոտ հպման հետեվանք եւ Յերեվի ելեքտրականությունը վորյեվե տեղ միացրել են։

— Քեռի՛ Նիկոլ, հարցրեց Աշոտը, ինչի՞ցնե սա, ես յերկու մեխը մտցրի ես ծակերի մեջ, և մեկը կարծես ենտեղից շամփուրի պես շանթեց ինձ։

— Տնաշե՞ն, դե ենա ասա ե՛լի։ Հիմի իմացա պատճառը։ Ուրեմն քու ոյինն եւ։

Նիկոլը գնաց նոր խցան բերելու, իսկ հայրն ու հարեվանները սկսեցին նախատել Աշոտին իր չարության համար։

Սակայն Աշոտը կարծես թե չեր լսում։ Նրա պատանի ովառում պատռում եր հազար ու մի հարց։

— Տեսնես եղ ի՞նչ տեսակ ուժ ե, ինչի՞ցն ե, վորտե՞ղ ե լինում, ինչու՞ խփեց նրա ձեռքին, ես մեխերի մեջն ի՞նչ ե, ինչու՞ հանգավ լույսը...։

Ու յերբ Աշոտը պատկեց քնելու, յերկար ժամանակ այս հարցերը չեյին հեռանում նրա բորբոքված գլխից:

2.

- Մյուս որը, յերեկոյան, Աշոտը գնաց քեռի Նիկոլի մոտ:
— Քեռի՝ Նիկոլ, չես նեղանա՞», վոր յեկել եմ մոտդ, հարցրեց,
Աշոտը ներս մտնելով:
— Ելի մի սատանություն ես արել:
— Չե՛, բան չեմ արել, այլ միայն մտածել եմ: Մադ գիշերը
քունս չի տարել: Խելքս բան չի կտրում:
— Ինչի՞ց.
— Ես ելեքտրականությունից: Եդ ի՞նչ տեսակ բան ե, վոր մեջը
համ եղքան զորություն կա, համ ել լույս: Դա ցանում են, թե
բանում ե ինքն իրեն, թե ջրի պես գետնի տակից ե զուրս գալիս:
Նիկոլը ժպտաց:
— Հը՛, հիմի հասկացա: Միտքդ են եր, վոր իմանայիր հա՞,
եյ լոթի:
— Հոգուդ մատաղ, քեռի Նիկոլ, ասա՞:
— Լա՞վ, լա՞վ, նստի, հիմի կը պատմեմ:
Ու մի փոքր մտածեց:
— Վո՞նց քեզ հասկացնեմ, թե ի՞նչ բան ե ելեքտրականու-
թյունը: Իսկն ասած, շատ դժվար ե: Դա՝ մի ուժ ե: Թե ի՞նչ տե-
սակ—հայտնի չե: Դա վո՞չ հեղուկ ե, վո՞չ գազ, վո՞չ ամուր բան,
վո՞չ կրակ և վո՞չ ել ող, այլ ուղղուկի ինքն ըստինքյան մի ուժ ե:
Յե՞վ ողի մեջ ե լինում, և ջրի, և մարդու: Մի խոսքով ամեն տեղ:
— Բա վո՞նց են դրան բռնում:
— Համբերի՛, մի վռազի, ժպտաց Նիկոլը: Խոնավ ողի մեջ
ելեքտրականությունը հավաքվում ե ավելի արագ ու լինում ե
յերկու—տեսակի: Մեկը կոչվում ե՝ դրական, մյուսը՝ բացասական:
Ետ յերկու ելեքտրական ուժերը միշտ ձգտում են միմիանց հետ
միանալ ու յերբ միանում են, են ժամանակ միջիցը դուրս ե գալիս
կայծ ու լսվում ե դղրդյուն: Վորոտ լսած կա՞ս: Կամ թե չե կայծակ
տեսել ես:
— Այո՛, վոր ի՞նչ, զարմացած հարցրեց Աշոտը:
— Ելեքտրականությունը եդ ե ելի՛: Մի ամպի մեջ դրականն
ե, մյուսի մեջ՝ բացասականը: Յերբ նրանք մոտենում են իրար, են
ժամանակ դրական ելեքտրականությունը միանում ե բացասականի
հետ: Բայց բանի վոր ամպերի մեջ ելեքտրականությունը շատ ե,

դրա համար ել չըթոցի տեղ լսվում է վորոտ, իսկ կայծն ել այնքան մեծ ու յերկար է լինում, վոր դառնում է կայծակ:

Աշոտը վառված հետաքրքրությամբ լսում եր քեռի Նիկոլին:



Աշոտը վառված հետաքրքրությամբ լսում եր քեռի Նիկոլին

— Այ, եղ ելեքտրականությունն ե, վոր մարդիկ սկսեցին ձեռք բերել, շարունակեց Նիկոլը: Իսկ ձեռք բերելը դժվար բան չի: Ձեթե սեզ մաղեր ունենաս ու վերցնես մի ուետինես սանր ու մութ սենյակի մեջ սանրես գլուխո՛ կտեսնես, վոր սանրի միջից կայծեր են թափվում: Ելեքտրականությունը հենց եղ ե, վոր կա:

— Վոնց վոր կայծակը:

— Վոնց վոր կայծակը: Ելեքտրականությունն ամեն տեղ ու ամեն բանի մեջ միյեվնույն հատկությունն ունի: Որինակի համար, վերցրու՛ մի ապակե աման, խցանով պնդի՛ր, ու խցանի միջով անցկացրու մի պղնձե ձող: Հետո, վերցրու թեկուզ մի աղվեսի պոչ ու խփի ուետինից շինած մի շրջանի, ու յերբ եղ պոչը մոտեցնես ամանի մեջ դրած պղնձե ձողին, ելեկտրականությունը կանցնի վերջինին: Յեթե դա մի քանի անգամ կրկնես, են ժամանակ ապակե ամանի մեջ կհավաքվի ենքան ելեքտրականություն, վոր յեթե

ձեռդ մոտեցնես ձողին՝ կայծը կխփի քեզ:

Այդ որը քեռի Նիկոլը շատ բան պատմեց:

Ու յերբ Աշոտը վերադարձավ տուն՝ գլուխը լիքն եր նոր գիտելիքներով ու նոր հարցերով:

Այդ որվանից Աշոտը հաճախ գնում եր մանայոր Նիկոլի մոտ ու ամեն անգամ մի բան սովորում:


Նա իմացավ, վոր ելեքտրականությունը կարող ե անցնել մաֆթուլի կամ թե ջրի միջով, վոր մի շարք առարկաների միջով անցնում ե ազատ կերպով, իսկ մյուսների միջով, ընդհակառակը, ամենեվին չի անցնում, վոր այդ առարկաները կոչվում են հաղորդիչներ։ Այսպես նա իմացավ, վոր մետաղները լավ հաղորդիչ են, վոր ջուրը նմանապես, լավ հաղորդիչ ե, ողը՝ վատ, փայտը՝ վատ, իսկ ապակին՝ ամենեվին չի հաղորդում և այլն։

Ինչքան շատ եր իմանում Աշոտը, այնքան ավելի եր ուզում, վոր ելի, ելի իմանա։

Նա իմացավ, վոր մարդիկ արդեն ոռվորել են ելեքտրականություն ձեռք բերելու գաղտնիքը և նրան բանեցնելու յեն իբրեւ շարժող ուժ գանազան նպատակների համար. իմացավ, թե ի՞նչ բան ե ելեքտրամագնիսը։

Ցեվ քեռի Նիկոլը չեր
ձանձրանում։ Համ պատմում
եր, համ ել սովորեցնում Ա-
շոտին իր գիտցածը։

Մի որ Աշոտը հարցրեց.
— Քեռի Նիկոլ, դու ի՞նչ
գործի՞ յես. ամեն որ առա-
վոտները գնում ես ու իրի-
կունները տուն գալիս։



Ելեքտրական լամպ

— Բա մինչեվ հիմի չգիտե՞ս։
— Վո՞չ։
— Ելեքտրական կայարանումն եմ ծառայում։
— Ելեքտրականությունը յերկաթուղի յե՞, վոր կայարան ել ունենա։

Նիկոլը ներողամիտ կերպով ժպատաց։
— Բա իսկի չե՞ս մտածել՝ թե եսքան ելեքտրական լույս, վոր սաղ Ցերեվանը լուսավորում ե, վորտեղից ե։
— Ցերկաթուղով ուրիշ քաղաքից ե՞ն բերում։
Նիկոլը մի կուշտ ծիծաղեց։

— Զե՛, սիրելիս: Եստեղ, մեր Հայաստանի ես սիրուն մայրաքաղաքումն ե դուրս գալիս: Զանգու գետը գիտե՞ս: Նրանից մի մեծ առու յեն վերցրել, վոնց վոր ջրաղացի առու: Զուրը եղ առվով գալիս և ու մի բարձր տեղից փայտե խողովակների միջով թափվում ցած: Եղ խողովակների տակը դրել են անիվի պես մի մեքենա, վոր կոչվում ե տուրբին: Զուրը վերեվից թափվելով, իր հոսանքի ուժով պտույտ ե տալիս տուրբինը: Ետ տուրբինի առանցքից կապել են մի կաշվե գոտի, վոր միանում ե դինամո—մեքենայի հետ ու պտուտ տալիս նրան:

— Ի՞նչ բան ե դինամո—մեքենան:

— Դա մի մեքենա յե, վոր ելեքտրական ուժ ե պատրաստում ու ռեստատի միջոցով բաժանում քաղաքին:

— Վա՞հ, քեռի ջա՞ն, չի կարելի^o, վոր ցույց տաս ինձ:

— Ինչի՞ չե: Եգուց կիրակի յե, կուզես, արի՛, տանեմ ցույց տամ: Ու յերբ Աշոտը տուն յեկավ՝ յերկար ժամանակ կրկնում եր մտքումը.

— Տուրբի՞ն, դինամո-մեքենա՝, ռեստատ, տես ի՞նչքան բան կա, վոր յես չգիտեմ ու չեմ տեսել:

Հետեվյալ որը, վաղ առավոտ, Աշոտը վազեց քեռի Նիկոլի մոտ ու նրանք ճանապարհվեցին դեպի Զորագեղ, վորտեղ շինած ե Յերեվանի ելեքտրակայարանը: Նրանք սուրբ Սարգսի փողոցով իջան Զանգուի ափը ու մտան կայարանը: Զըի հսկայական աղմուկը, կարծես թե, խլացրեց Աշոտին, ինչպես ջրաղացի մեջ: Նա շատ դժվարությամբ եր լսում դիմացինի խոսակցությունը:

Նիկոլը բռնեց նրա ձեռից ու մեկ-մեկ ցույց տվեց մեքենաներն ու բացատրեց նրանց նշանակությունը:

Յերբ նրանք բարձրացան Զորագեղից ու դառնում եյին տուն, քեռի Նիկոլը ավելի զարմանալի բաներ պատմեց:

Նա պատմեց, վոր շուտով այդ կայարանի փոխարենը պիտի շինեն մի նոր կայարան, վոր 5600 ձիու ուժ պիտի ունենա, այժմյան 350 ուժի փոխարեն ու պիտի լուսավորի քաղաքն ու շրջակայքը: Այդ գեռ բավական չե: այդ կայարանը պիտի բանացնի ելեքտրաքարշը, Յերեվանի մեջ գտնվող գործարանները, Զանգուից ջուրը պիտի բարձրացնի վերեվի անջրտի հողերը վոռողելու համար, պիտի, վառարանի փոխարեն, ձմեռը տաքացնի հիմնարկները, տները, ոջաղի փոխարեն կերակուր պատրաստի և ուրիշ շատ զարմանալի բաներ:

Աշոտը, վոր հափշտակված լսում եր, ասաց:

— Քեռի Նիկոլ, յես հեքյաթների մեջ շատ եմ լսել, վոր կա

անմահական ջուր, վոր բժշկում ե հիվանդներին ու հարություն տալիս մեռելներին, կա անմահական խնձոր, վոր ամեն ինչ անում ե, բայց չգիտեյի, վոր կյանքի մեջ կա մի այդ տեսակ անմահական կայծ, վոր այդքան հրաշքներ ե գործում:

— Հարա՞՝, սիրելիս, մի կաց, տես մեր յերիտասարդ Հայաստանը եղ կայծի միջոցով ինչեր պիտի անի: Տասը տարի չի անցնի ու մեր յերկիրը, վոր մինչեվ հիմի աղքատությունից ու արյունից ավելի բան չի տեսել, իսկական դրախտ կդառնա:

Ու մի փոքր լուելուց հետո՝ ասաց հառաչելով.

— Ե՞ս, սիրելի՝ Աշոտ, յերանի քո աչքերին, վոր եղ ամենը պիտի տեսնես: Ա՛խ, ինչ կլիներ, վոր մի քսան տարի ջահել լինելի...

3.

Այդ ձմեռ Աշոտը շատ բան իմացավ:

Նա սկսեց հասկանալ իր շրջապատում կատարվածներն ու ըմբռնել Հայաստանում ծայր տվող շինարար աշխատանքի իմաստը:

Ուսումնարանում նա մտերմացավ մի քանի ընկերների հետ, վորոնք նրան տարան և գրեցին պատկոմ:

Բայց միյելնույն ժամանակ չեր կտրում իր կապը մանայոր Նիկոլի հետ:

Նա Աշոտին արդեն սովորեցրել եր, թե ինչպես պիտի ելեքտրական լամպեր կամ ելեքտրական զանգեր անցկացնել:

Մի անգամ հայրը Աշոտի միջոցով մի թուղթ ուղարկեց քաղաքի հիմնարկներից մեկը, թուղթը տալիս նա լսեց, վոր այդ հիմնարկի վարիչը մարդ ե վորոնում իր առանձնասենյակից դեպի մյուս սենյակները ելեքտրական զանգեր անց կացնելու համար: Աշոտը մոտեցավ նրան ու ասաց:

— Ընկեր, տվե՞ք յես անց կացնեմ:

— Կարո՞ղ ես, հարցը վարիչը տարակուսանքով:

— Ինչ մեծ բա՞ն ե, պատասխանեց Աշոտը կարմրելով:

— Եղակես փոքրիկ տեղո՞վդ: Դոչա՞ղ: Ապա տեսնե՞նք, ասաց վարիչը ու շոյանքով խփեց նրա ուսին:

Աշոտը վագեց տուն, վերցը գործիքներն, ու իրանից մի քանի անգամ յերկար սանդուխքը շալակելով դնաց:

Յերկու որ շարունակ աշխատեց նա: Յերկար սանդուխքը մի պատից մյուսը քաշ տալով՝ բարձրանում եր ու իջնում, մեխեր խըփում, մաֆթուիներ անց կացնում:

Ու չափ չկար նրա ուրախությանը, յերբ վարիչի սենյակից կոճակը հուսլ տվեց ու նախասենյակում զանգակը հնչեց:

Նա ուրախ-ուրախ վազեց վարիչի մոտ ու ասաց.



Վարիչը շոյանքով խփեց Աշոտի ուսին

— Պատրաստ ե, ընկե՛ր:

Հիմնարկի ծառայողները շրջապատեցին նրան ու սկսեցին զանազան հարցեր տալ ու զարմանալ նրա գիտության վրա, իսկ վարիչն աննկատելի կերպով նրա ափը դրեց մի չերվոնեց:

Աշոտն ամաչեց, բայց միյեվնույն ժամանակ չհավատաց իր աչքերին:

Տասը ոռւբլի՛: Դա մի հակայական հարստություն եր նրա համար:

Քանի՛ գործիք կառներ այդ փողով, քանի՛ գիրք, տետրա՛կ...

Հայրը, յերբ իմացավ այդ՝ սկսեց մի առանձին հարգանքով վերաբերվել նրան.

— Չե՛ ա՛յ տղա, վոնց վոր տեսնում եմ, նեղությունս իզուր

Հպիտի կորչի:

Այդ որը մինչեվ ուշ յերեկո, Աշոտը նստած պատռհանի մոտ մորը նամակ եր գրում, ուր նկարագրում եր իր կյանքի մեջ կատարված առաջին, ինքնուրույն գործը...

4.

Ամրան արձակուրդին Աշոտը գնաց իրենց գյուղը:

Հայաստանի մի հետ ընկած անկյուններից մեկումն եր գտնը-վում նա: Ներքեվ հոսում եր լեռնային աղմկոտ գետակը՝ սպիտակ փրփուռը բերանին, իսկ վերեվ, մի գեղանիոտ ձորի մեջ, լեռան ստորոտում, գգվում եր գյուղը՝ հողազուրկ, աղքատ ու մերկ:

Վորքա՞ն փոքր, խղճուկ և մանավանդ խավար թվաց նա թերեվանի հանդեպ:

Մայրն արտասուքն աչքերին գրկեց նրան ու բացականչեց.

— Յես քու անունիդ, քու ուսումիդ մատաղ, ազի՞զ բալա...

Շուտով նրան շրջապատեցին նրա ազգականներն ու, ապա, գյուղական ընկերները՝ Շիլ-Մարկոսենց Սաքոն, Վարժապետենց Պետոն, Վաղարշը, Հայկազը և ուրիշները:

Յեկավ և գյուղի ուսուցիչը, վորի միջամտության շնորհիվ Աշոտը գնաց քաղաք՝ ուսումը շարունակելու համար:

Բոլորն ուրախում եյին, զարմանքով նայում նրան, անվերջ հարցեր տալիս:

Բայց Աշոտը վո՞ր մեկը պատմեր:

Այժմ նա այնքա՞ն բան ե տեսել, այնքա՞ն բան գիտի: Ողե՛ր են հարկավոր:

Ու Աշոտը պատմում եր:

Նա շուտով իր գյուղական ընկերներից մի խմբակ կազմեց, վորի հետ, համարյա ամեն որ, հանդիպում եր ու պատմում իր տեսածն ու գիտցածը:

Ինչքա՞ն բան կա քաղաքում, վորի մասին իրենց գյուղը գաղափար չունի:

Նա պատմում եր, թե ինչպե՞ս յերկաթե գծերի վրայով, փոքրիկ խրճիթների մեծությամբ, վագոններն են սլանում՝ մեջը լիւապրանք ու մարդիկ. Թե ինչպե՞ս առանց ձիու ու լծկանի, ֆուրգոնի կամ ֆայտոնի մեծությամբ, ավտոմոբիլներն են թըռչում փողոցներում. Ինչպե՞ս մարդիկ, կարծես թեվ առած, ցինի կերպարանք ունեցող չարխերի վրանստած, սավառնում են ողի մեջ:

Նա պատմում եր, թե ինչպե՞ս մի քաղաքից մի ուրիշ քաղաք



Աշոտը զնում ե գյուղ

մաֆտուլի միջով տառեր են թռչում ու մարդկանց միտքը հայտնում։ Թե ինչպես մարդիկ մի աշխարհից մի ուրիշ աշխարհ, անթել հեռագրով, ողի մեջ ալիքներ առաջացնելով, ուղիո գրեր են ուղարկում։ Ինչպես քաղաքի մեջ, մի տնից մի ուրիշ տուն, կամ մի քաղաքից մի ուրիշ քաղաք, նույն յերկաթե թելերի միջոցով մարդիկ խոսում են միմիանց հետ։

Իսկ տպա քաղաքները։

Տները՝ մեծ-մեծ, ամեն մեկը մի յեկեղեցի, միջի մարդիկը՝ մի-

մի գեղ:

Տների տակով, պատերի միջով անց են կացրել յերկաթե խողովակներ, վորոնց մեջ գիշեր-ցերեկ ջուր և հոսում և ուղղակի սենյակի մեջ բացվում, իսկ կեղտոտ ջրերը, ուրիշ խողովակների մեջ, նույնպիսի ճանապարհով, դեպի գետն են գնում:

Իսկ ապա լուսավորությունը:

Գիշերները, փողոցների մեջ, ամեն մի սյունից մի-մի արեգակ և կախած, տների մեջ, ամեն մի պատից՝ մի-մի լուսնյակ:

Ամենից շատ Աշոտը կանգ առավ ելեկտրականության վրա:

Այստեղ, արդեն, նա պատմելու ու բացատրելու շատ բան ուներ:

Լսում եյին այս ամենը նրա ընկերներն ու զարմանում: Դրանից և վոչ մեկը չկար նրանց գյուղում:

— Իսկ գիտե՞ք մարդիկ ի՞նչ ճանապարհով են հասել այս բուլորին, հարցրեց Աշոտն իր ընկերներին ու չսեղով պատասխան՝ հեղինակավոր կերպով ասաց.

— Ուսմա՞ն, գիտությա՞ն: Այ, յերբ ուսումն ու գիտությունը տարածվի մեր յերկրում, զարգանա հողագործությունն ու արհեստը, այն ժամանակ, միայն Յերեվանը չի տեսնի այս ամենը, այլև Հայաստանի ամեն մի գյուղ, ամեն մի ավան:

Ու պատմեց, թե Յերեվանում ինչքա՞ն ջանքեր են թափում, վոր մեր փոքրիկ Հայաստանը լինի լուսավոր, զարգացած ու հարուստ...

Յեկ վորքան շատ եր պատմում Աշոտը, այնքան ավելանում եր նրա հմայքը:

Նա, իր ընկերների շրջանում, ձեռք եր բերել մի այնպիսի հեղինակություն, վորի նմանը գյուղում չուներ վոչ վոք:

Ու քանի գնում Աշոտի կաղմած խմբակը ավելի յեր ստվարանում, ու մեջի ընկերական կապը ավելի ամրանում:

Շուտով նրանք դիմեցին տեղական ուսուցչին, վոր նա ուսումնարանի շենքում նրանց մի սենյակ հատկացնի, ուր նրանք սկսեցին հավաքվել ու խմբական ընթերցանությամբ պարապել:

Մի կիրակի նրանք խմբով դուրս յեկան գյուղից՝ զբոսնելու և շրջակայքը ուսումնասիրելու համար:

Նրանք ձորակով բարձրացան դեպի վեր, վորտեղից լեռնային գետակն եր հոսում:

Մի-յերկու վերստ հեռավորության վրա, այստեղ, ուր ձորի ափերը մոտենում են միմիանց՝ մի սքանչելի տեսարան բացվեց: Զուրը նեղվելով կիրճի մեջ, մի քարափի վրայից շաջունով թափում եր դեպի ցած ու թագնվում այստեղ, իր փրփուրներից կու-

տակված սպիտակ ժանյակների դեղի մեջ,

Աշոտը հիացմունքով բացականչեց:

— Տղե՛րք, ջրվե՛ժ...

Ընկերներից մեկը նկատեց.

— Ի՞նչ ես զարմանում: Ո՞վ չգիտի մեր գյուղում, վոր այստեղ ջրվեժ կա:

— Ինչպե՞ս չզարմանամ: Ախր, դուք չգիտեք, թե սա ի՞նչ պարզեց ե մեր գյուղի համար:

— Պարզե՞մ:

— Այո՛, պարզե՞մ, շարունակեց Աշոտը հավշտակված: Դուք չըգիտեք, թե ինչքա՞ն ոգուտ կարող ե տալ մեզ:

— Ջրվեժից ոգու՞տ, հեգնեցին ընկերները:

— Այո՛, ոգու՞տ: Վա՞հ, այս ջրվեժը կարող ե մեր և շրջակա բոլոր գյուղերին լույս տալ, մեր տները տաքացնել, մեր ճանապարհները բանեցնել: Ցեվ վոր գլխավորն ե, մեր գյուղի առաջին ընկած ե ահագին տարածություն, վոր խոպան ե մնացել ջուր չհասնելու պատճառով, վոռոգել ու մեր գյուղի համար հարստության աղբյուր բանալ:

Ու նա պատմեց նրանց Յերեվանի նոր ելեքտրական կայարանի ծրագրի մասին:

Տղաները լսեցին և վոգեվորվեցին.

— Աշո՞ւ, ասացին նրանք, արի մենք ել մեր գեղի համար շինենք:

— Բա, ո՞վ կլսի մեզ, տարակուսեցին նրանցից մի քանիսը ու նայեցին Աշոտին:


— Կլսե՞ն, պատասխանեց Աշոտը վստահորեն: — Մեր վարժապետին կասենք — նա առաջադեմ ե. մեր գյուղական խորհրդի նախագահին կասենք, նա ջահել ե, Ներսիսյան դպրոցն ե ավարտել, մեզ կհասկանա: Ու գյուղացիներին ժողովի կանչելով կրացատրենք, կհամոզենք: Կանե՞ն, յես կասկած չունեմ: Այս ըոպեյիս ամբողջ Հայաստանն ե շինարարություն անում, մենք ինչի՞ յետ պիտի մնանք:

Ու նրանք հանդիսավոր տրամադրությամբ վերադարձան իրենց գյուղը, ինչպես հաղթական պատերազմից յեկող զինվորներ:

5.

Գյուղական ժողով գումարելու համար շատ ժամանակ չանցավ: Արդեն ամեն տեղ խոսում եյին Աշոտի և նրա ընկերների ծրագրի մասին:

Գյուղի յերիտասարդները, վարժապետն ու խորհրդի նախագահը պաշտպանում եյին, իսկ հասակագործները, թերահավատում: Վո-



մանք նույնիսկ վորոշակի կերպով դեմ եյին խոսում:

Այսպես, գյուղի քահանան այդ ծրագիրը համարում եր սատանայական.

— Աստվածաշնչի մեջ գրած ե, բացատրում եր նա, վոր մի-
այն աստված կարողացավ ասել. «Յեղիցի լույս և յեղեվ լույս»...
Մարդ արարածն ինչպե՞ս կարող ե հանդգնել նույնն անելու. Յեկ
այն ել ինչի՞ց—ջրվեժից. Սատանայական վորոգայթներ են դրանք,
վորդիք, մի հավատաք:

Գյուղի խանութպանը, մեծափոր Ղազարը, վոր ամեն տեսակ
մանրուքների հետ ծախում եր և կերոսին, քմծիծաղ տալով ասում
եր.

— Վայ են գեղին, վոր լակոտների խելքով պիտի բան բռնի.
Սակայն Աշոտը այդ առարկություններին արժանի պատաս-
խան եր տալիս ու բոլորին հասկացնում, համոզում:

Վերջապես տեղի ունեցավ գյուղական ընդհանուր ժողովը,
վորտեղ խոսեցին նախագահը, ուսուցիչը, մի քանի յերիտասարդ-
ներ ու Աշոտը:

Բոլորն ուշադրությամբ ու պատկառանքով լսեցին փոքրիկ Ա-
շոտին ու զարմացան, թե ինչքան գիտուն ու համարձակ տղա ե:

Ժողովը վորոշեց դիմել կենտրոնական կառավարության, վոր
նա մի ինժեներ սւեպրկի՝ այդ ծրագիրը քննելու ու մի նախահա-
շիվ կազմելու համար:

Ինժեները յեկավ և Աշոտի առաջարկը գտավ հեշտ իրագործե-
լի և, վոր գլխավորն ե, շատ քիչ ծախս պահանջող:

Կառավարությունը բաց թողեց անհրաժեշտ մեքենաները՝ մաս-
մաս վճարելու պայմանով: Եինության համար քարն ու փայտը գյու-
ղի ունեվորներից առան, իսկ աշխատանքը, կամավոր կերպով, հանձն
առան կատարելու գյուղի յերիտասարդները:

Ոգոստոս ամիսն եր, յերբ վերջանում եր Աշոտի ամառային
արձակուրդը և նա պիտի թողներ իրենց գյուղն ու գնար ուսումը
շարունակելու:

Ուսումնարանի կտորի վրա, վաղ առավոտից, դեռ արեգակը
չծագած, գյուղի զուռնաչիները փչում եյին «սահարին»:

Բոլոր ծայրերից, գյուղացիները, վորը՝ բան, վորը՝ թի, վորը՝
քլունգ ուսերին գրած հավաքվում եյին դպրոցի բակը:

Ահա յեկան Աշոտն ու իր ընկերները՝ շարք-շարք, տրեխները
հագներին, բահերը ուսերին:

Ամենքն ուրախ եյին, ամենքը կայտառ:

Առաջ ճանապարհ ընկավ լոլող Ակոբը՝ կարմիր դրոշակը ձե-

ոին, նրան հետեւվեցին զուռնաշիները՝ իրենց նվագով, ապա գյուղացիները՝ գործիքները հրացանների պես ուսերին դրած։

Այդ որը հիմք եր դրվում գյուղի ելեքտրական կայարանի շինության…

Սակայն Աշոտը մի քանի որից հետո պիտի գնար Յերեվան։ Նրա արձակուրդն արդեն վերջացել եր։

Յեվ յերբ լուսաբացին ձիու վրա նստած, մի խումբ գյուղացի ճանապարհորդների հետ, տխուր ու տրտում, բարձրանում եր դիմացի սարը՝ գյուղի մեջ տեղը, դպրոցի կտրին նվագում եյին նույն «սահարին», վորի զիլ հնչյունները աշխատանքի եյին կանչում գյուղացիներին։

Աշոտը, արտասուքն աչքերին, գլխարկը հանեց, մնաս բարով ասաց իրենց գյուղին, ու ձիու վրա անհետացավ սարի հետեւիին…

6.

Հետեւյալ ամռան, յերբ Աշոտը նորից վերադարձավ իրենց գյուղը՝ ելեքտրական կայարանն արդեն պատրաստ եր ու շուտով տեղի պիտի ունենար նրա հանդիսավոր բացումը։

Այդ որն անմոռաց կմնա գյուղի պատմության մեջ։

Վաղ առավոտից զուռնաշիները կրկին դպրոցի կտրին սկսել եյին իրենց նվագը։

Վողջ գյուղը՝ ծեր ու յերիտասարդ, տղա ու աղջիկ, տոնական տրամադրությամբ, իրենց ամենալավ շորերը հագած, կարմիր դրոշակներով, յերգեցողությամբ, նվագածուները առաջները զցած՝ ճանապարհ ընկան դեպի ջրվեժը։

Դեպի ջրվեժն եյին գալիս և հարեվան գյուղերից՝ դրոշակներով, ու նվագով։

Այնտեղ, ձորի մեջ, ջրվեժից վոչ հեռու, կառուցել եյին ելեքտրական կայարանի փոքրիկ շինությունը, վորից մի քանի յերկաթե թելեր, սյուների վրա ամրացրած, աջ ու ձախ գյուղերն եյին տանում։

Ջրվեժի գլխին, ձորի մեջ, մի փոքրիկ ավագան եր շինած, վորից մի յերկար խողովակ բարձրանում եր դեպի վեր, ձորի գլխին ընկած ընդարձակ դաշտը։

Այնտեղ ուր վերջանում եյին խողովակները, շինել եյին նոր առուներ, վորոնք ակոսում եյին ամրող դաշտը։

Կես որվա ուղիղ ժամը 12-ն եր, յերբ Յերեվանից յեկած հյուրերն ու գյուղական խորհրդի անդամները բարձրացան ելեքտրական կայարանի կտուրը։

Հյուրերից մեկը դառնալով դեպի ներքեվ խոնվող ամբոխը՝
ասաց:

— Այս որը պիտի լինի Հայաստանի հաղթական տոներից
մեկը. Այս որվանից պիտի բացվի ձեր գյուղի համար յերջանկու-
թյան ու հարստության դուռը...

Աշոտը լսում եր ելեքտրականության տված ոգուտների մասին
արտասանած այդ ճառը, ինքը վողջ ելեքտրականություն դարձած...

Կարո՞ղ եր նա յերեվակայել, վոր իր և իր ընկերների առա-
ջարկած ծրագիրը այսպես շուտ իրականություն կդառնա:

Վորքա՞ն կուրախանար քեռի Նիկոլը, յեթե այստեղ լիներ,
ինչքա՞ն նյութ պիտի ունենա նա ձմեռն իր ընկեցներին՝ Յերեվա-
նում պատմելու համար...

— Ցեվ չպիտի մոռանաք, վերջացնում եր իր խոսքը ճառա-
խոսը, վոր այս ձեռնարկությունը ձեր գյուղի մատաղ սերնդի
դուծն ե...

Վողջ ձորը թընդաց կեցցեներով:

Չուռնաչիները նվազեցին:

Իսկ գյուղի խորհրդի նախագահը, դառնալով ժողովրդին՝ ելեք-
տրական կայարանը հայտարարեց բացված ու նրա ճակատին տըն-
կեց կարմիր դրոշակը, վորի վրա ծածանվում եյին ամենի սրտին
մոտիկ ու սիրելի չորս տառերը՝

Հ. Ա. Խ. Հ.


Շինության ներսը տուրբիները շաշեցին, կաշե գոտին պար-
տեց, ելեքտրամոտորը շարժվեց ու մի փոքր անց, ձորի գլխին,
յերկաթե խողովակից ջրի հոսանքը, ստորյերկրյա շատրվանի նման,
դուրս պոռտկաց ու սկսեց հոսել նոր փորած առուի մեջ:

Վերեվ ձորի ափին հավաքված գյուղացիները ցնծագին աղա-
ղակեցին, և հնչեց յերկրորդ նվազախումբը:

Գյուղի ծերերը, արտասուքները աշքերին, չոքում եյին առ-
վի յեղբին ու ափ անելով խմում ջրից, իսկ յերիտասարդներն ու
հարսները պար բռնած ուղեկցում եյին ջրի անդրանիկ հոսանքին:

Հանդեսի վերջին քսանհինգ գյուղացի պատանիներ, շարք-շարք,
մոտեցան խորհրդի նախագահին՝ Աշոտի գլխավորությամբ.

— Բնկեր նախագահ, ասաց նա, հայտնում ենք ձեզ, վոր
այսուհետ կայարանը, իր բոլոր պարագաներով, գտնվում ե մեր
հակողության ներքո: Վատահ յեղեք, վոր մենք կպահենք նրան,
ինչպես մեր աշքի լույսը:



Գյուղի ելեքտրական կայարանը

Չորե նորից թնդաց ցնծության ու նվազի հնչյուններից:
Աշոտի մայրը, վոր գտնվում եր ամբոխի մեջ, յերջանկութան
բրտառնուքն աչքերին մրմնջաց.

— Յես քու լեզվին, քու խելքին մեռնեմ, բալա, ջա՞ն...
Իսկ յերեկոյան ամենքը, փողոց յելած, շրջում եյին գյուղը,
նվագում, յերգում ու պարում, վորովհետեւ փողոցներում տըն-
կած սյուների ծայրերից ելեքտրական լամպերը լույսի ճառագայթ-
ներով հեղեղում եյին չորս կողմը՝ գիշերը դարձնելով ցերեկ:
Ու Աշոտը, տեսնելով այս ամենը, քիչ եր մնում, վոր հըրճ-
վանքից հեկեկար...



Հ. Ա. Խ. Հ. ՊԵՏՐՈՎԻ ՄՈՌԿԱՅԻ ԲԱԺԱՆՈՒԹՈՒՆՔ

Լոհես և ՏԵՍԵԼ

ԳԻՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ԳՐԱԴԱՐԱՆ

- Կ. ՄԱՐՔՍ ՅԵՎ. Ֆ. ԵՆԳԵԼՍ.— «Կոմունիստական Մանիֆեստ»:
Դ. ՌՅԱԶԱՆՈՎԻ պարզաբանութերով յեզ նախարա-
նով հայկական հրատարակության առթիվ:
ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ Ե

Տպագրության համար.— «Մարքսը վորպես մարդ, հե-
ղափոխական յեզ մտածող»— հոդվածների
ժողովածու:

ԼԵՆԻՆՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ


Լոհես և ՏԵՍԵԼ

- Ա. ԴԵԲՈՐԻՆ.— «Լենինը վորպես մարտնչող մատերիա-
լիստ» հեղինակի նախարանով հայկական
հրատարակության առթիվ:
Ն. ԲՈՒԽԱՐԻՆ.— «Լենինը վորպես մարքսիստ»:
Մ. ՊԱՎԼԵՈՎԻՉ.— «Լենինը յեզ աղգային հարցը»:
Ա. ԿԱՐԻՆՅԱՆ.— «Լենինը յեզ պետությունը»:
ՏՊԱԳՐՎՈՒՄ Ե
- Կ. ՌԱԴԻԿ. — Լենին:

ԴՐԱՅՈՑԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Լոհես և ՏԵՍԵԼ

- ԿՈՐԴԵԼԻԱ.— «Գնացքը փրկող աղջիկը»:
Կ. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ.— «Անմահական կայձը»— (Փոխագրու-
թյուն):
ՏՊԱԳՐՎՈՒՄ Ե
- ՈՍԿԱՐ ՈՒԱՅԼԴ.— Մանուկ Արքա:



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0068477

(III.)

ЦЕНА

111
3д09